

**ԳԻՐ ՈՐՀՆՈՒԹԵԱՆ  
ՏԻԹՐՈՅԻ Ա. ՑՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻՑ  
Տիկնանջ Միութեան**

Տիթրոյի Սուրբ Յովհաննէս Սկրտիչ Հայց. Եկեղեցւոյ Տիկնանց Միութեան յիսնամեակի այս տօնակմբութեան առիթով, ըստ պաշամութեան, պիտի ոգեկոչուին անծեր, որոնք հմտնեցին միութիւնը, եւ պիտի յիշատակուին զործեր, որոնք սատարեցին ընդարձակ համայնքի ընդհանուր զործունէութեան եւ բարգաւառումին:

Ինչպէս ամէն տեղ, Տիթրոյի Հայ կանայք եւս իրենց մայրական եւ քրոջական սէրն ու զութը միախառմեցին, համախորհուրդ եւ համաշունչ կատարեցին իրենց ստանձնած պարտականութիւնները, առաւելագոյն չափով արդիւնաւորելու համար զեղեցիկ առաջադրութիւններ: Ժառայեցին անոնք ոչ միայն իրենց հաճոյքին եւ հոգեկան գոհունակութեան, այլ Աստուծոյ փառքին եւ մեր սուրբ Եկեղեցւոյ պայծառութեան համար: Այսպէսով առաւել զօրացան իրենց հաւատքին մէջ, ժրաժանութեամբ ու նուիրումով զործեցին, զոհաբերեցին, ուրախութիւն պատճառելով եւ բարի օրինակ հանդիսանալով ժամանակիցից եւ յաջորդող սերունդներուն:

Հրուեցան ի տես այն սրանցելի իրազործումներուն, որոնց շնորհիւ մեծաքայլ յառաջդիմութիւններ կարողացաւ արձանագրել Տիթրոյի մեր Եկեղեցին, որ այժմ ունի ամէն յարմարութիւն՝ հասնելու համար շրջանի բոլոր կարիքներուն, զոհացում առաջի ժողովուրդի արդար ակնկալութիւններուն: Ասիկա ինքնին սփոփանք կրնայ պատճառել աեղւոյն մեր հասարակութեան:

Մեր թեմի բոլոր Եկեղեցական կազմակերպութիւններու կարգին, Տիթրոյի Տիկնանց Միութեան անդամուն հիներէն շատեր, իրենց երկար ապրիներու նախանձակնդիր ու կորուկի զործակատարումով արժանացած են համայնքի մեր զաւակներուն սիրոյն եւ յարգանքին:

Մեր ջերմ մաղթանքն է որ Տիկնանց Միութիւնը, հաստատուած աւանդութիւնը շարունակելով, աւելի եւս կարենայ իրուացնել զործակցութեան ոգին իր անդամուն հիներուն մէջ, եւ ջանադիր ըլլայ այն յայտագիրներուն, որոնք կրնան զարկ տալ Ս. Յովհաննէս Սկրտիչ Եկեղեցւոյ հոգեւոր, կրթական, մշակութային եւ ընկերային կեանքի բեղմնաւորման եւ ծաղկումին:

Կ'օր հնենք Տիկնանց Միութեան վարչականներն ու բոլոր անդամուն հիները, եւ իրենց կը մաղթենք նոգիի եւ մարմինի խաղաղութիւն:

Միրոյ ողջունիւ

ՊՈՐԳՈՍ ԱՐԵՆԳԻՍԿՈՎՈՍ  
Առաջնորդ